ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՀԱՄԱԶԳԱՅԻՆ ՄԵԾ ՅՕԲԵԼԵԱՆԸ

—

Էջմիածնից կաթողիկոսական դիւանապետ Բագրատ վարդապետը հեռագրում է հոկտեմբերի 5-ից.

Հայ գրերի գիւտի 1500 և հայ տպագրութեան 400-ամեակի առիթով Նորին Վեհափառութիւն Ամենայն Հայոց Կաթողիկոսը բարեհաճեց նշանակել յօբելեանական տարին 1912 թւի հոկտ. 13-ից մինչև 1913 թւի հոկտ. 12-ը։

Այս հոկտ. 13-ին կը կայանայ յօբելեանի բացումը եկեղեցական և դպրոցական հանդէսներով, իսկ 1913 թ. հոկտ. 12-ին, ս. Մեսրոպի տօնի օրը, կը լինի յօբելեանի փակումը Էջմիածնում առանձին հանդէսով, ներկայութեամբ հաստատութեանց ներկայացուցիչների։

Յօբելեանական տարվայ ընթացքում տեղի կունենայ հանգանակութիւն դպրոցական ֆոնդ կազմելու յօգուտ հայ եկեղեց.-ծխական դպրոցների։ Հանգանակութիւնը թոյլատրված է մի տարի ժամանակով Նորին Պայծառափայլութիւն կովկասեան փոխարքայից։